## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Որոշման նախագիծը կազմվել է ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետություն օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի և 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով,համաձայն որի համայնքի ղեկավարն առաջին տեղակալից բացի,կարող է ունենալ ևս երկու տեղակալ ու համայնքի ղեկավարի տեղակալներին համայնքի ղեկավարի ներկայացմամբ նշանակում է ավագանին՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Վարդան Կարոյի Խաչատրյանի՝ համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվելու դեպքում, վերապահել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված գործառույթները :

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Կ ԻՎԱՆՅԱՆ

30.10.2024թ.

## ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծի ընդունման դեպքում համայնքի բյուջեի ծախսերի և եկամուտների փոփոխություն չի լինի,քանի որ բյուջեի աշխատակազմի աշխատավարձի ֆոնդում համապատասխան միջոցներն արդեն իսկ նախատեսված են:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Կ ԻՎԱՆՅԱՆ

30.10.2024թ.

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ք. Սիսիան 31.հոկտեմբերի.2024թ

Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում քննարկվեց «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին» ավագանու որոշման նախագիծը:

Նախագծին տրվեց դրական եզրակացություն:

Հանձնաժողովի նախագահ՝ Բ.Թամրազովա